Հիպոթերապիան որպես մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների բուժման միջոց

(Գրախոսություն)

Ներածության մեջ Մերին կարողացել է հստակ ներակայացրել ուսումնասիրվող նյութի նպատակը, որտեղ անդրադարձել է երեխաների զարգացման տարբեր խնդիրներին, այդ թվում մակական ուղեղային կաթված ունեցող երեխաների վերականգնման գործում հիպոթերապիայի արդյունավետությանը: Ներկայացրել է խնդիրները՝ հանդես գալով առաջարկով:

Առաջին գլխում ներկայացված է հիպոթերապիայի ծագումնաբանությունը, որտեղ մատչելի մանրամասնել է, թե ինչպես էին հին ժամանակներում որոշ քաղաքակրթություններ արդեն բուժիչ հատկություններ վերագրել ձիավարությանը՝ այն օգտագործելով բժշկական և վերականգնողական նպատակներով: Նյութը ընթերցելիս հնարավոր է լիարժեք ինֆորմացիա ստանալ ձիաբուժության ձևավորման պատմությունից:

Անրադարձել է հիպոթերապիայի հիմնական առանձնահատկություններին: Մանրամասնել է հիպոթերապիայի օգտակարությունը, ինչպես նաև հակացուցումները: Մատչելի նկարագրել է, թե որ ֆիզիկական և հոգեբանական խնդիրների դեպքում է առավել արդյունավետ հիպոթերապիան: Նյութի բովանդակությունը հնրավորություն է տալիս ամբողջական պատկերացում ունենալ հիպոթերապիայի արդյունավետության մասին:

Երկրորդ գլխում ներկայցված է հիպոթերապիայի դերը ՄՈՒԿ ունեցող երեխաների վերականգնողական աշխատանքում: Մերին անրադարձել է մանկական ուղեղային կաթվածի զարգացման պատճառներին, բնութագրել է ձևերը ըստ դասակարգման, նկարագրել է յուրաքանչյուր ձևի հիմնական ախտանիշներն ու նշանները: Նյութն ամբողջական է, և կարողացել է ցույց տալ, թե հիպոթերապիան որքան կարևոր դեր է խաղում մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների համալիր վերականգնման գործում՝ բարելավելով նրանց ֆիզիկական, էմոցիոնալ և սոցիալական վիճակը:

Երրորդ գլխում ներակայցված է իր կողմից թերապևտիկ աշխատանքի ուսումնասիրության արդյունքը: Մերին այցելել է «Փայտե ձի» հիպոթերապիայի կենտրոն դիտարկման նպատակով, ուսումնասիրել է հիպոթերապիայի ընթացքում մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների հետ տարվող պարապմունքները՝ վերհանելով թերապիայի ընթացքում ՄՈՒԿ ունեցող երեխաների արդյունքները: Ինչպես նաև դուրս է բերել առանձին հաջողված պատմություններ:

Եզրակացության մեջ Մերին ամփոփել է իր աշխատանքը, ներկացրել է հիպոթերապիայի դերի կարևորությունը, նաև նշել է, որ այն «համադրման միջոց չէ և համապատասխան չէ բոլորի համար: Այն պահանջում է բժշկի խիստ գնահատում և առաջարկություն»:

Դիտարկումներ

Աշխատանքի գրականության ցանկը նշված է, սակայն աչքի է ընկնում հղումների նյութում բացակայությունը: